

Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոցն, սրբագրեալ ի գրոց հնոցն, սակս աւգտի, եւ զարդարեցի ոսկով եւ տնաւրինականով, եւ աւտանաւորով, ի փառս Փրկչին. եւ բերեալ ի Հայս պարգեւս մեծ վարդապետին եւ քաջ վարդապետին իմոյ Եսայեայ, եւ պարոն եղբարցն իմոց եւ հարցն Պաւլոսնոց տոխմին. զի եւ սակս աւկտի ինձ եւ այլ համբալկաց, որք կամին աւկտիլ յԱղէկսանդրէ. զի թէպէտ էր յընտիր եւ ի հին աւրինակէ, այլ անյարմար եւ շաղկապի. վասն որոյ զտեալ եւ քերեալ քերաւղաւդէն, արարի անսուտաւրինակ ճանապարհ. զի ի յընթեռնուլն իմասցին պըւէտիկոսքն, քարտուղարք, եւ ապայ իմասցին զիմ աշխատանս ի սմայ, զոր լիապէս վաստակեցի՝»

Այս տողերու համաձայն Ջաքարիա իւր առջեւի բնագիրը՝ խաչատրոյ եւ Գրիգոր Աղթամարցւոյ խմբագրութեամբ, «զարդարած է ոսկւով», այս է ոսկենկարներով, զոր միշտ պարծենալով կը յիշէ եւ այլուր. այսպէս «Ջաքարէ եպիսկոպոս գծողս եւ նկարողս Աղեքսանդրի գրոց», «ի Ջաքարիայ եպիսկոպոս նկարողէ», եւն։ Բայց հոս պէտք է դիտել, որ, ինչպէս Հ. Տաշեան կը միտի կարծել (էջ 130) ամէն նկարազարդ օրինակք վարուց Աղեքսանդրի Ջաքարիայի հետեւողութեամբ չեն. այսպէս Ջաքարիայի ժամանակակից Յովասափ Սեբաստացի մի եւ նոյն ատեն (1535) օրինակած է նկարներով եւն Նալխութենէսի գործն¹, որ այժմ կը պահուի Բերլինի Մատենադարանը (Cod. Arm. 100):

¹ Զեռ. մասին տես Տաշեան՝ անդ, 165—166: